

բողջովին զուտ եռամսհանքը կը դառնայ միապաղաղ և տաղտկալի։ Աւելորդ չեմ համարում խոստովանել այստեղ, որ սոյն ոտանաւորի մէջ երկու բառ—Բարմեալ և Բարից—մնում են ինձ անծանօթ, թէև գործածութիւնից կարելի է գուշակել, որ մին նշանակում է քրմեալ, միւսը՝ ամբողջ, համօրէն, Բար, որի յոգնակի սեռականը Բարից, ինձ թւում է միևնոյն ժողովրդական բառը ինչ որ արար (արար աշխարհ), սկզբի ա-ն գեղջուած որոշ դիտումով։

Մեսրոպ. վրդ. Մախուդեանց

Ք ի ց ն ե լ .

Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ *)

6.

Իմ նազելի բարեկամ,

Թող այս սուրբ և հանդիսաւոր բոպէիս լռէ, հանդարտէ իմ վիրաւոր, ցաւերով ու խոցերով լցուած սիրտը. Թող դա այժմ տեղի տայ մեղմ և խաղաղ զգացողութիւնների, մի քանի խօսք ասելու Քեզ, արժանաւորիդ, անվրդով հոգով և քաղցր բերանով, որպէս պատշաճ է այս բոպէիս։ Ես չունիմ դիտաւորութիւն նոր ի նորոյ հաւատացնել Քեզ իմ սէրը և բարեկամութիւնը. դա շատ հին է և երկար ու ձիգ տարիների վերջով ստուգուած ու հաստատուած։ Ոչ, ես կամիմ միայն մի քանի խօսքով խոստովանել Քեզ այն երանական բախտաւորութիւնը, որ ամենաբարի Նախախնամութիւնը շնորհել է ինձ Քո եղբայրական և բարեկամական սիրովը։ Ասում եմ Քո եղբայրական և բարեկամական սէրը, իմ ազնիւ Մելքոն, իմ հոգեհարազատ բարեկամ։ Այդ սէրը և բարեկամութիւնը այսքան երկար տարիների մէջ զարդարել է իմ կեանքը, պայծառացուցել է իմ պղտոր և մռայլ օրերը, մխիթարել է իմ շատ անգամ մինչև ի մահ տրտում սիրտը—ինչ ասեմ—իմ վերջին օրերի անմխիթար փշալից անապատը ծաղկազարդել է ուրախութեան վարդերով։ Իմ ազնիւ, միակ Մելքոն, իմ հոգով չափ շնորհակալութիւնը որպէս յայտնեմ Քեզ. դորա համար չունիմ ես յայտարար խօսքեր, այլ միայն սէր և ամենախորին զգացողութիւն երախտագիտութեան, առ ի սրտէ յարգանք ու մեծարանք դէպ ի Պատուականդ։ Խնդրում եմ, որ և այսուհետև պահես Դու

*) Տես «Արարատ» 1916 թ. Յունուար—Յունիս եւ Նախորդ համարները։

ինձ քո բարեկամական սէրը և վստահութիւնը, և այսուհետեւ
լինես ինձ մխիթարիչ, ուրախակից և ցաւակից բարեկամ կեանքի
ապագայ օրերում:

Քո Քեզ անփոփոխ սիրով սիրող և յարգող

Ս. Նազարեանց

Մոսկուա,

6-ին Յունուարի 1866.

7.

Հոգեհարազատ Սիրելի,

Նոր կենդանութեան Ոսկի առաւօտ,

Քեզ առողջութիւն, Քեզ օրեր յաջող

Մաղթում է այսօր Քո սիրոյ կարօտ,

Քեզ սիրող եղբայր, բարեկամ յարգող:

Իմ ուրախութեան և ցաւի կցորդ,

Դու Մելքոն եղբայր, իմ գլխի պսակ.

Ի՛նչ կշռով կշռեմ, որ լինի ուղղորդ,

Մի ազնիւ եղբօր չկայ փոխանակ:

Ե՛ւ այսօր որպէս միշտ և յարաժամ

Նուիրում է Քեզ այն միակ ընծայն,

Որ ունի տալու Քեզ Քո բարեկամ,

Իւր սէր անխարդախ, սէր մեծարական:

Ս. Նազարեանց.

6 Յունուարի 1868 թ.

Մոսկուա

8.

Իմ ազնիւ եղբայր Մելքոն,

Թող այս Քո սուրբ տօնի նուիրական օրիս ասեմ Քեզ քանի
մի խօսք, գուցէ վերջինքը, որ այսպիսի խորհրդով իմ սրտից ու
շրթունքից կենդանի ձայնով հնչում են դէպի Քեզ: Քանի մի
խօսք. որովհետեւ Սէրը, ճշմարիտ Սէրը, չգիտէ շատ խօսել, մա-
նաւանդ թէ լեզու չունի, այլ միայն գործ, ընծայաբերութեամբ,
որ առաւել մեծ, դժուարին ու հոյակապ է—այսինքն իւր անձը
նուիրելով և ընծայելով իւր սիրականին, ամենայն զրկանք, ամե-
նայն նեղութիւն և տառապանք քաղցր համարելով, ամենայնի՛
տանելով ամենայնի՛ համբերելով վասն իւր սիրականին:

Մեր ծանօթութիւնը միմեանց, տասն և ութ տարի է. այս երկար ու ձիգ ժամանակում, Դու ցուցել ես Քո անձը այնպիսի մտերիմ բարեկամ, այնպիսի սրտացաւ ընտանի մարդ առ իս և առ իմայինքը, այնպիսի խորին սրտով ուրախակից իմ ուրախութեանը, ցաւակից իմ ցաւին, որպիսի կարելի էր միայն այն ազնիւ, քնքուշ ընաւորութեամբ ու սրտով, որովք Աստուած զարդարեալ է Քեզ, առ ի լինել արդարեւ ճշմարիտ նմանութիւն իւր աստուածեղէն պատկերի։ Ո՞րպէս բացայայտեմ Քեզ իմ սրտի զեղուն, թաթաղուն շնորհակալութիւնը, որպիսի արժանաւոր գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմ Բարձրելոյն վասն Նորա անկշռելի պարգևին, վասն Ձեր գերօրինակ սիրալից բարեկամութեանը, որոյ նոյնքան ևս գերօրինակ ապացոյցքը—միշտ սակաւագիւտ բան այս մեր հոգեղէն աշխարհում—ևս առաւել լուսափայլ պայծառութեամբ փայլեցած են իմ կեանքի մռայլ ու խաւար օրերում։ Դու լաց եղար լացողիս հետ, Դու արտասուեցիր արտասուողիս հետ, Քո բարեկամական ձեռքը սիրոյ ծաղիկներով զարդարեցին իմ ննջեցեալ սիրելիների ճակատը։

Մի այդպիսի բարեկամութիւն, եղբայր իմ Մելքոն, կարող է մոռացուիլ. դորա յիշատակը ազամանդեայ տառերով դրոշմած կը մնայ իմ սրտի տախտակի վերայ։ Ի՞նչ փոխարէն տամ Քեզ այսօր իբրեւ նշան փոքր ի շատէ երախտագիտութեան. ոչինչ չունիմ բացի սիրուց և մեծարանքից, որ և այսօր աղաչում եմ Քեզ ընդունիլ իբրեւ միակ արժանաւոր նուէրը, որ կարող է մատուցանել Քեզ քո բարեկամը։

Խնդրեմ ընդունել ինձանից և մի փոքրիկ յաւելուած, մի նիւթական նուէր¹⁾ իմ աննիւթ սիրոյ և մեծարանքի նուէրի վերայ։ Դա մի չնչին, գուցէ ամենաչնչին ընծայ է, մի մեռեալ ուրուական։ Բայց կամիմ յուսալ, որ հրաշագործ սիրոյ աչքը իւր քաղցր արարիչ հայեացքով դորա վերայ, կընծայէ դորան այն կենդանութիւնը և այն պատուականութիւնը, որից դա ինքն ըստ ինքեան անմասն ու անբաժին է։

Քո անձնուէր, Քեզ սիրող ու մեծարող եղբայր
Ստեփանոս Նազարեանց։

6 Յունուարի 1869 թուականի,

Մոսկուա։

(Նարունակելի)

Յ. Տէր Յակովբեանց.

1) Դժբախտաբար չկարողացանք իմանալ, թէ ի՞նչ է այդ նուէրը։